# ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ
# ՕՐՀՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ


# ՎՐԱՍՏԱՆ
ՄՆԱ ՏԱՆԸ

«ՅՐԱՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 29 - 30 (16832) ՇԱԲԱԹ 11 ԱՊՐԻԼԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


COVID - 19

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԵԹԵ ՈՒՆԵՔ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՔ ՇՆՉԵԼ, ԱՆՄԻՋԱՊԵՍ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 112: ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԳՈՐԾԵԼ ՆԱԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱՑԵՐԵՆ, ՀԱՅԵՐԵՆ, ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ 144 ԹԵԺ ԳԻԾԸ»

### ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԲԱՑԱՌՎԱԾ ՉԷ

*Ապրիլի 9-ին կորոնավիրուսի կանխման միջգերատեսչական համակարգող հանձնաժողովի հեռավար նիստում Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, անդրադառնալով քաղաքացիների իրազեկվածության թեմային, հայտարարեց, որ 144 թեժ գիծ զանգերը զգալի կրճատվել են, քանի որ քաղաքացիներն արդեն մանրամասն գիտեն, թե որոնք են արտակարգ դրության իրավական նորմերը:*



- Վերջերս, ըստ անհրաժեշտ պահանջարկի, ներմուծվեց քառալեզու` վրացերեն, հայերեն, ադրբեջաներեն եւ ռուսերեն զանգահարման կենտրոն` 144, որի հիմնական խնդիրն է մեր քաղաքացիներին իրենց մայրենի լեզվով պատասխան տալ

(Շարունակությունը` 2-րդ էջում)

## «ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՆԳԱՄԻՑ ԵՐԿՈՒ ԴԱՇՏՈՒՄ` ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ...»

### ՀՆԱՐԱՎՈՐ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԼՈՒՐՋ ՆՎԱԶՈՒՄ

*Ապրիլի 10-ին նոր կորոնավիրուսի կանխման միջգերատեսչական համակարգող խորհրդի հեռավար հերթական նիստում, խորհրդի նախագահ, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան իր ելույթում առանձնապես ընդգծեց, որ համավարակի հետեւանքով երկրում տնտեսական անկում է սպասվում:*

- Մենք պայքարում ենք երկու մարտադաշտում` առողջություն եւ տնտեսական զարգացում, ու դաշտերից մեկի հաղթանակը գին չի ունենալու: Բնականաբար, տնտեսական մարտահրավերներն այսօր ավելի քան կարեւոր են, կարող եմ ասել` այո, սպասում ենք տնտեսական աճի նվազում, ուստի համապատասխան փոփոխություններ կներդրվեն բյուջեում: Կառավարությունն արդեն աշխատում է այս` կարանտինի ու արտակարգ դրությունից դուրս գալու ուղղությամբ: Դա պետք է միանշանակ մշակված ծրագիր լինի, որը կպահի քաղաքացիների առողջության ու տնտեսական զարգացման ներուժի հավասարակշռությունը: Դա տեղի չի ունենա մեկ օրում կամ մեկ շաբաթում,- ասաց վարչապետը:

Հիշեցնենք` Համաշխարհային բանկի կանխատեսումներով, COVID-19-ի պատճառով Վրաստանի տնտեսական աճը կտրուկ դանդաղել է:

ԱՊՐԻԼԻ 9-Ը` ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

## ԱՊՐԻԼՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ 31 ՏԱՐԻ ԱՆՑ

*Ապրիլի 9-ին լրացավ Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում 1989 թվականի այդ օրը տեղի ունեցած ողբերգության 31-րդ տարելիցը: 1989 թվականի ապրիլի 9-ի լուսաբացին խորհրդային զորքերը բռնությամբ ցրեցին մայրաքաղաքի կենտրոնում անցկացվող խաղաղ ցույցը: Բռնի գործողության արդյունքում, զոհվեց 21 մարդ, հարյուրավոր ցուցարարներ թունավորվեցին զորամիավորումների օգտագործած գազից:*

Ողբերգությունից ուղիղ երկու տարի անց` 1991 թվականի ապրիլի 9-ին, Վրաստանի գերագույն խորհուրդն ընդունեց երկրի Անկախության հռչակագիրը` բացելով նորանկախ Վրաստանի պատմության էջը:



Այսպիսով, ապրիլի 9-ը Վրաստանի պատմու-

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՏՈՆԸ

*Կիրակի օրը` ապրիլի 12-ին, ժամը 10:30-ին, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի բոլոր գործող տաճարներում կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ` նվիրված Հիսուս Քրիստոսի Հարության Հրաշափառ տոնին, որը կհաղորդվի բարձրախոսներով եւ առցանց միացումներով:*

*Հաջորդ օրը` ապրիլի 13-ին, Ննջեցյալների հիշատակի օրն է:*



## ԱՍՏՎԱԾԱՄՈՒԽ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՒՆԵՑԵԼ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

### ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Ապրիլի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին նշեց Երուսաղեմ Տեր Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքի տոնը` Ծաղկազարդը:*



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Սուրբ Տրդատի բաց խորանի առջեւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվել է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվել են աշխարհի չորս կողմերը:

Այս առիթով, աշխարհին պատուհասած համավարակի պայմաններում, ի մխիթարություն եւ ի բժշկություն ժողովրդի, դուրս էր բերվել համաքրիստոնեական մեծագույն սրբություններից մեկը` Սուրբ Էջմիածնում պահվող Աստվածամուխ Սուրբ Գեղարդը, որից սփռվող օրհնության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Տիրոջ հովանին համայն աշխարհին, ողջ ժողովրդին:

Առանձնակի նշվեց, որ Սուրբ Էջմիածնում պահվող Աստվածամուխ Սուրբ Գեղարդը, առանձին պատմաբանների հավաստմամբ, մի քանի անգամ կանխել է համաճարակների տարածումը Հայաստանում, եւ վրաց թագավոր Էրեկլե II (1720-1798) եւ նրա որդու` Գիորգի XII (1746-1800) խնդրանքով, ժանտախտի բռնկման ժամանակ այն բերվել է նաեւ Վրաստան` հրաշագործ ազդեցություն ունենալով համաճարակը կանխելու գործում:

Արարողության ավարտին համայն հայության հոգեւոր կենտրոնից Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին:

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

*Ապրիլի 5-ին Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմում նշվեց Երուսաղեմ Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքի տոնը` Ծաղկազարդը:*

Համավարակի եւ երկրում գործող արտակարգ դրությամբ պայմանավորված, հավատացյալների կողմից սիրված այս տոնը այս տարի Վիրահայոց թեմում նշվեց փոփոխված ձեւաչափով: Եկեղեցիներում հավուր պատշաճի մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ` բացված վարագույրներով խորանի առջեւ:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիներում Սուրբ Պատարագի ողջ ընթացքը հաղորդվեց բարձրախոսներով եւ առցանց միացումներով:

Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ, Սուրբ Պատարագը

(Շարունակությունը` 2-րդ էջում)

COVID - 19

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԵԹԵ ՈՒՆԵՔ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՔ ՇՆՉԵԼ, ԱՆՄԻՋԱՊԵՍ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 112: ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԳՈՐԾԵԼ ՆԱԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱՑԵՐԵՆ, ՀԱՅԵՐԵՆ, ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ 144 ԹԵԺ ԳԻԾԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

արտակարգ դրության պայմանների եւ օրենսդրական նորմերի վերաբերյալ: Այս զանգերի կենտրոնը գործում է, եւ զանգերի քանակը զգալի նվազել է: Քաղաքացիներն արդեն մանրամասն գիտեն, թե որոնք են արտակարգ դրության իրավական առանձնահատկությունները,- ասաց Գիորգի Գախարիան:

Վարչապետը խոսեց երկրում արտակարգ իրավիճակների՝ 112-ի կարեւորության մասին, ստեղծված իրավիճակից ելնելով, եւ նշեց, որ 112-ը դարձել է COVID-19-ի դեմ պայքարի առաջին գիծը, քանի որ այն հնարավորություն է տալիս քաղաքացիներին ստանալ բարձր մասնագիտական խորհրդատվություն, ախտանիշների հայտնվելու հենց սկզբից եւ պարզեն՝ արդյոք նրանք պե՞տք է մնան տանը, թե՞ դիմեն հիվանդանոց:

- Ես կարող եմ պաշտոնապես հայտարարել, որ 112-ը ամբողջովին հարմարվեց առողջապահության նախարարությանն ու առաջին օգնության ծառայությանը, ինչը նշանակում է ընտանեկան եւ գյուղի բժիշկ: Սա COVID-19- ի դեմ պայքարի առաջին գիծն է, քանի որ մեր քաղաքացիներից յուրաքանչյուրը, հենց ունենա տարրական ախտանիշներ՝ ջերմություն, շնչառության դժվարություն, կարող է զանգահարել 112:

Երկրորդը, մենք պաշտպանում ենք մեր շտապօգնության ցանցը, որի ռեսուրսներն այժմ պետք է խնայել:

Կոչ եմ անում բոլորին, հենց որ առաջին ախտանիշներն ի հայտ գան ջերմություն, շնչառական դժվարություն, առաջինը, որ դուք պետք է անեք՝ զանգահարել 112 համարին, Վրաստանի ցանկացած մասից,- ասաց Գիորգի Գախարիան:

Վարչապետն անդրադարձավ նաեւ արտակարգ դրության ժամկետի թեմային՝ հայտարարելով, որ չի բացառում երկրում արտակարգ դրության երկարաձգումը:

- Ամեն ինչ հնարավոր է, ամեն ինչ պայմանավորված կլինի համաճարակաբանական իրավիճակի ընթացքից, դրա ծանրությունից կամ, հակառակը, տեսնենք, թե ինչպես կզարգանա այն: Մեր հիմնական խնդիրը մեր քաղաքացիների առողջությունն է,- ասաց Գիորգի Գախարիան՝ պատասխանելով լրագրողների այն հարցին, թե արդյոք նախատեսվո՞ւմ է երկարացնել արտակարգ դրությունը:

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԸ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ



***Ապրիլի 7-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլու մասնակցությամբ, անցկացվեց ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերում կորոնավիրուսի տարածման, կանխման նպատակով, քաղաքացիական հասարակության խորհրդատվական խորհրդի հեռավար նիստը:***

Նիստի մասնակիցների թվում էր «Վրաստան» թերթի խմբագիր, Վրաստանի հայերի միության փոխնախագահ Վան Բայբուրթյանը:

Նիստում կողմերը քննարկեցին կորոնավիրուսի դեմ պայքարում ազգային փոքրամասնությունների ներդրումների կողմից իրականացվելիք գործողությունները: Խորհրդի անդամները պետնախարարին մանրամասն տեղեկատվություն փոխանցեցին երկրամասերում ստեղծված իրավիճակի, ինչպես նաեւ առանձին հարցերի կարգավորման մոտեցումների մասին: Իր հերթին, Քեթեւան Ցիխելաշվիլին, պետնախարարի աշխատակազմի աշխատակիցները խորհրդի անդամներին մանրամասն պատմեցին իրականացված աշխատանքի եւ ծրագրած ակտիվությունների մասին: Հեռավար հանդիպմանը ծրագրվեց թեմատիկ խմբերի՝ լրատվամիջոցների տնտեսական, կրթական ու գյուղատնտեսական ուղղություններով խմբերի հետ հանդիպումների անցկացումը: Նաեւ նշվեց, որ պետնախարարի աշխատակազմի կողմից իրականացված քարոզարշավի շրջանակներում, նոր կորոնավիրուսով պայմանավորված շուրջ 400 հազար մայրենի լեզվով տեղեկատվական նյութ է փոխանցվել ազգային փոքրամասնություններով հոծաբնակ մունիցիպալիտետներին:

# ԿԱՅԱՑԵԼ Է ԵՐԵՎԱՆ-ԹԲԻԼԻՍԻ-ԹԵՀՐԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՏԵՍԱԿԱՊԸ

Հայաստանի Հանրային ռադիոյի «Ռադիոլուր» հաղորդաշարի առցանց եթերում, Լիլիթ Աղբալյանը ուղիղ կապ է հաստատել մեր հայրենակիցներ Վրաստանում՝ «Վրաստան» թերթի խմբագիր, հասարակական գործիչ Վան Բայբուրթյանի, Իրանում՝ Թեհրանի համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Անդրանիկ Սիմոնյանի եւ Թուրքիայում՝ Տիգրանակերտից ընտրված պատգամավոր Սեւան Դեյիրմենճյանի հետ: Հյուրասրահի զրուցակիցներից յուրաքանչյուրը հայտնել է իր երկրում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակն ու վարակի տարածման դեմ պայքարի մեթոդները, խոսել կառավարության ձեռնարկած քայլերի ու տեղի հայության շրջանում հաստատված դեպքերի մասին:

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

# ԱՊՐԻԼՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ 31 ՏԱՐԻ ԱՆՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան մեջ գրանցվեց որպես ողբերգության օր, եւ միաժամանակ, Վրաստանի Անկախության վերականգնման օր:

1990 թվականից այդ օրը հազարավոր մարդիկ, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ իրենց խոնարհումն են բերում ապրիլյան ողբերգության վայրում՝ Ռուսթավելու պողոտայում, կանգնեցված ողբերգության զոհերի հիշատակը հավերժացնող կոթողի մոտ ծաղկեպսակներ տեղադրելով: Կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրությամբ սահմանված խիստ սահմանափակումների պայմաններում, մարդիկ առանձին-առանձին մոտենում էին եւ իրենց ծաղիկները խոնարհում հուշակոթողին եւ անմիջապես հեռանում:

Ապրիլյան զոհերին հարգանքի տուրք մատուցեց նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մատուցեց ավագ քահանա արժանապատիվ Տեր Եղիշե Հարությունյանը:

Ապաշխարհության կարգը եկեղեցիներում նույնպես կատարվեց բացօթյա, ծնկաչոք հավատացյալների մասնակցությամբ՝ պահպանելով միմյանցից 2մ հեռավորությունը: Անսալով հոգեւորականաց դասի հորդորին՝ հավատացյալները ստացան սուրբ հաղորդությունը՝ մուտք գործելով առանձին-առանձին:

Հավարտ Սուրբ Պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետը, շնորհավորելով Ծաղկազարդի տոնի առիթով, գնահատանքի խոսքեր ուղղեց ներկաներին կարգ ու կանոնը պահպանելու եւ իրավիճակին ըմբռնումով մոտենալու համար, նաեւ հայտարարեց, որ Ավագ շաբաթվա բոլոր արարողությունները կկատարվեն ըստ Հայոց Եկեղեցու կանոնակարգի եւ կհաղորդվեն առցանց, իսկ ներկա գտնվողների անվտանգության համար կպահպանվեն արտակարգ դրությամբ սահմանված բոլոր չափանիշները:



Վերջում բոլոր հավատացյալներին բաժանվեցին օրհնված ձիթենու ճյուղեր:

Ծաղկազարդի Սրբազան Պատարագը ըստ պատշաճի մատուցվեց Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթիի առաջնորդական փոխանորդության, Բաթումիի եւ Վրաստանի տարածքում գործող թեմի բոլոր եկեղեցիներում, միայն հոգեւորականաց եւ սարկավագաց դասի մասնակցությամբ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՏԱՍԸ ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐ՝ ԵՐԿՐԻ 81 ՏԱՐԱԾԱՇՋԱՆՆԵՐՈՒՄ

*Ապիլի 10-ի դրությամբ, Ռուսաստանում կորոնավիրուսով վարակված անձանց թիվը մեկ օրում ավելացել է 1459-ով՝ հասնելով 10 131-ի: Վարակի դեպքեր գրանցվել են երկրի 81 տարածաշրջաններում:*

*Վերջին տվյալների համաձայն, առողջացել է 698 մարդ, մահացել է 76-ը:*

*Սպառողների իրավունքների նկատմամբ վերահսկողության եւ մարդկանց բարեկեցության ապահովման ՌԴ դաշնային ծառայությունը տեղեկացնում է, որ երկրում ավելի քանի 1 մլն կորոնավիրուսի թեստավորում է կատարվել: Կառույցը նշել է, որ 171 հազարից ավելի մարդ կորոնավիրուսի կասկածով գտնվում է բժիշկների հսկողության տակ:*

ԱՄՆ

## ԳՐԵԹԵ ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՎԱՐԱԿՎԱԾ ԵՎ ՇՈՒՐՋ 17 ՀԱԶԱՐ ՄԱՀԱՑԱԾ

*Ապրիլի 10-ի դրությամբ, ԱՄՆ-ում կորոնավիրուսից մահացածների թիվը կազմում է 16 513: Ընդհանուր առմամբ, երկրում գրանցվել է Covid-19 վարակի ավելի քան 465 000 դեպք: Ամենաբարդ իրավիճակը Նյու Յորքում է, որտեղ կորոնավիրուսից մահացել է ավելի քան հինգ հազար մարդ:*

*Վայոմինգ նահանգը միակն է, որտեղ կորոնավիրուս չի գրանցվել:*

ՄԵԾ ԲԻՏԱՆԻԱ

## ՎԱՐՉԱՊԵՏ ԲՈՐԻՍ ՋՈՆՍՈՆԸ՝ ԻՆՏԵՆՍԻՎ ԲՈՒԺՄԱՆ ՏԱԿ

*Միացյալ Թագավորությունում, վերջին 24 ժամում, կորոնավիրուսից զոհվել է 936 մարդ: Այդ թվում՝ Անգլիայում արձանագրվել է մահվան 828 դեպք, Ուելսում՝ 33, Հյուսիսային Իռլանդիայում՝ 5 եւ Շոտլանդիայում՝ 70 դեպք:*

*Ընդհանուր առմամբ, Մեծ Բրիտանիայում կորոնավիրուսից մահացել է 7144 անձ: Վարակված է 56 հազար մարդ: Վարակվածների թվում է նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը: Ներկա դրությամբ, նա ինտենսիվ բուժման տակ է: Բժիշկների հայտարարությամբ, նրա վիճակը բարելավվել է:*

ՖԱՆՍԻԱ

## ԱՃՈՒՄ Է ԻՆՉՊԵՍ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ

*Վերջին 24 ժամում, Ֆրանսիայում կորոնավիրուսից մահացել է 541 մարդ:*

*Ապրիլի 10-ի տվյալներով, Ֆրանսիայում կորոնավիրուսից մահացածների թիվը հասել է 10 869-ի:*

*Ֆրանսիայի առողջապահության նախարարության փոխանցմամբ, ինտենսիվ թերապիայի բաժնում է մնում 7148 մարդ: Նրանցից 482-ի վիճակը ծայրահեղ ծանր է: Ֆրանսիայում վարակից ապաքինվել է ավելի քան 21 հազար մարդ:*

ԻՏԱԼԻԱ

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ ԱՆՆՇԱՆ Է

*Նախորդ օերի համեմատությամբ, Իտալիայում ապրիլի 10-ին վավերացվել է ինչպես վարակվածների, այնպես էլ՝ մահացածների համեմատաբար քիչ քանակությունը: Վերջին 24 ժամում կորոնավիրուսից մահացել է 542 մարդ, իսկ վարակակիրների թիվն ավելացել է 1,3 տոկոսով՝ վավերացվել է 1195 նոր դեպք, բուժվել է 2099 մարդ:*

*Երկրում համավարակի սկսվելուց մինչ օրս կորոնավիրուս է արձանագրվել 139 422 մարդու մոտ: Մահացել է 17 669 մարդ:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

# ՀԱՏՈՒԿ ՉՎԵՐԹ ԱՄՆ-ԻՑ. ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՀԱՅԵՆԻՔ

### ՄԻՋԱՆՑՔ ՎՐԱՍՏԱՆՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ

***Վրաստանի եւ ԱՄՆ-ի համատեղ ջանքերով, հայրենիք վեադարձվեցին FLEX կրթական փոխանակման ծրագրով ԱՄՆ-ում գտնվող Վրաստանի 79 եւ Հայաստանի 35 դպրոցականներ: Ընդ որում, հայրենիք վերադարձածների թվում են ախալքալաքցիներ Մարտին Փալանջյանն ու Լիկա Մանասյանը, նինոծմինդացիներ Արտեմ Այվազյանն ու Լոլա Եսոյանը:***



Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, ամերիկյան կողմի աջակցությամբ, վրաց եւ հայ դպրոցականները հայրենիք վերադարձան ամերիկյան կողմից տրամադրված ինքնաթիռով: Նշենք, որ ԱՄՆ-ից Թբիլիսի ինքնաթիռը միջանկյալ վայրէջք կատարեց Դոհայում:

- Մենք համագործակցեցինք մեր հայ գործընկերների հետ, նրանք խնդրել են, որ այս չվերթով մենք Ամերիկայից Վրաստան կտեղափոխենք նաեւ Հայաստանի քաղաքացի 35 երեխայի,- հայտարարել է Գիորգի Գախարիան:

Վրաստանում Հայաստանի դեսպանության տեղեկատվությամբ, վրացական իշխանությունների հետ բանակցությունների արդյունքում, ապրիլի 9-ին հնարավոր դարձավ Թուրքիայում գտնվող Հայաստանի 73 քաղաքացիների տեղափոխման համար Վրաստանի տարածքով միջանցքի տրամադրումը եւ նրանց Հայաստան տեղափոխումը 2 ավտոբուսներով:

Վրաստանում ՀՀ դեսպանությունը համակարգել է Վրաստանի տարածքում ՀՀ քաղաքացիների դիմավորման եւ մինչեւ Բագրատաշենի անցակետ տեղափոխման աշխատանքները:

# ՀԱՏՈՒԿ ՔԱՐՏԵՐ՝ ԱՌԱՔԻՉ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ




***«TBC-ին՝ քեզ համար» ծրագրի շրջանակներում, սպառողների կենսապայմանների դյուրացման նպատակով, բանկը առաքիչ ընկերություններին առաջարկում է նոր սպասարկում՝ առաքման նոր քարտեր:***

Եթե մինչ այդ, առաքիչների եւ առեւտրական օբյեկտների ներկայացուցիչների միջեւ ապրանքի ընդունման ժամանակ օգտագործում էին կանխիկ գումարներ, ապա ապրիլի 15-ից նրանք կարող են օգտվել հաշիվ-հաշվառման անվտանգ այլընտրանքից՝ վճարումները իրականացնել քարտերով:

Նոր սպասարկումից օգտվելու համար, առաքիչ ընկերությունների ներկայացուցիչների համար ստեղծվել է հատուկ քարտ, իսկ արտադրողների համար կօգտագործվեն հատուկ պոստտերմինալներ, որոնց ավելացվել է առաքման համար վճարումների գործառույթը:

TBC բանկի որոշմամբ, բոլոր առաքիչ ընկերությունները, որոնք վերոնշյալ քարտը ստանալու են մինչեւ ընթացիկ տարվա հունիսի 1-ը, մեկ տարվա ընթացքում ազատվում են քարտի համար սահմանված կոմիսիոն սակագնի վճարումից: Բացի այդ, առաքիչ ընկերությունների համար, որոնք կօգտվեն ոչ կանխիկ հաշիվ-հաշվառումից, մինչեւ հունիսի 1-ը կվերացվեն առաքման տրանսակցիաների վրա սահմանված կոմիսիոն սակագները: Առանց լրացուցիչ ծախսերի, հնարավոր կլինի նաեւ առեւտրական օբյեկտներում գործող պոստտերմինալների վրա համապատասխան գործառույթների ակտիվացումը:

Առաքիչ ընկերությունները մինչեւ ապրիլի 15-ը քարտը ստանալու համար, պետք է դիմեն կորպորատիվ բանկերին կամ կապվեն TBC-ի հեռախոսային կենտրոնի (032 2 27 27 27) հետ: Առեւտրական օբյեկտների ներկայացուցիչները պոստտերմինալին լրացուցիչ գործառույթի ակտիվացման հայտով, նույնպես կարող են կապվել TBC բանկի թեժ գծով:

Առաքման քարտի եւ պոստտերմինալին վերոնշյալ քարտով հաշիվ-հաշվարկման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է բանկի կայք-էջում:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ, ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԱՐՏԱԿԱԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԳՐԵԹԵ ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ԴԵՊՔ

***Ինչպես տեղեկացնում է Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, արտակարգ դրության հայտարարումից առայսօր սահմանված կանոնների խախտման համար պատասխանատվության է ենթարկվել գրեթե երեք հազար մարդ:***

Վերջին 24 ժամվա ընթացքում արձանագրվել է արտակարգ դրության եւ պարետային ժամի 115 նոր խախտում: Ապրիլի 9-ի ժամը 21:00-ից ապրիլի 10-ի ժամը 06:00-ն ընկած ժամանակահատվածում՝ պարետային ժամի ընթացքում, ՆԳՆ-ն տուգանել է 75 քաղաքացու: Բացի այդ, 42 քաղաքացի է տուգանվել՝ հանրային վայրերում մինչեւ 3 հոգու ներկայության եւ 2 մետր սոցիալական հեռավորություն պահպանելու կարգը խախտելու համար:

Արձանագրվել է ինքնամեկուսացման կարգի խախտման 5 դեպք, իրավապահները տուգանել են նաեւ ուղեւորների փոխադրման եւ մեքենայով տեղաշարժման կանոնները խախտող 21 քաղաքացու:

Հիշեցնենք, արտակարգ դրության պայմանները խախտելու դեպքում, ֆիզիկական անձը տուգանվում է 3000, իսկ իրավաբանական անձը՝ 15 000 լարիով: Գերատեսչության տեղեկատվությամբ, ներկա դրությամբ, գրանցվել է գրեթե 9 միլիոն լարիի տուգանք:



## ՀԱՄԱՆԵՐՈՒՄ՝ ԻՆԸ ԿԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԻ

*Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին համաներման ակտ է հրապարակել Ավետման տոնի կապակցությամբ եւ համաներում շնորհել ինը դատապարտված կանանց: «Բոլոր դատապարտյալներն ունեն մեկ կամ մի քանի անչափահաս երեխա, եւ նրանց կողմից կատարված հանցագործությունները բռնության բնույթ չեն կրում:*

*Բոլոր ինը դատապարտյալներն այսօր կթողնեն Քրեակատարողական հիմնարկը»,- ասված է նախագահի աշխատակազմի տարածած հայտարարության մեջ:*

## 100 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒ ԸՆՏԱՆԻՔԻՑ՝ «StopCoV» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

*«Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլու ընտանիքը 100 միլիոն լարի է փոխանցել «StopCoV» հիմնադրամին:*

*Ինչպես հայտարարել է «Cartu» հիմնադրամի խորհրդի նախագահ Նիկոլոզ Չխետիանին, Բիձինա Իվանիշվիլին փոխանցել է 100 միլիոն լարի: «Բիձինա Իվանիշվիլու ընտանիքի փոխանցումը «StopCoV» հիմնադրամին կազմում է 100 միլիոն լարի: Մի քանի օր առաջ Բիձինա Իվանիշվիլին 100 միլիոն լարի է փոխանցել «Cartu» հիմնադրամին, եւ այդ գումարն արդեն «Կորոնավիրուսի դեմ պայքարի հիմնադրամի» հաշվեհամարին է»:*

*Նշենք, որ ներկա դրությամբ «StopCoV» հիմնադրամին փոխանցված գումարը կազմել է՝ 124.543.899 լարի:*

## ՎՐԱՍՏԱՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ԱԱՀ-ԻՑ

*2020-ի ապրիլի 2-ից հոկտեմբերի 1-ը, բուժական/բժշկական բիզնեսի համար նախատեսված ապրանքի ներմուծումն ազատվում է ԱԱՀ-ից (ավելացված արժեքի հարկ):*

*Որոշումն ընդունվել է Վրաստանի կառավարության կողմից ստեղծված՝ կորոնավիրուսի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից եւ ֆինանսների ու առողջապահության նախարարությունների համատեղ հրամանով:*

შემოსავლების სამსახური

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հայտարարությամբ, նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումը կանխելու միջոցառումների շրջանակներում, Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանի մաքսային անցակետերով բեռնատար ավտոմեքենաների (այդ թվում՝ տարանցիկ ուղեւորությունների դեպքում) եւ երկաթուղային բեռնափոխադրումներն իրականացվում են 24-ժամյա աշխատակարգով, հատուկ մշակված արձանագրությունների պահպանմամբ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ադրբեջանական կողմից ժամանակավորապես ընդունված կարգավորումների համաձայն, առաջիկա երկու շաբաթվա ընթացքում, Վրաստանի մաքսային սահմանագծում գործող բոլոր անցակետերում՝ «Կարմիր կամուրջ», «Լագոդեխի», «Սամթածղարո» եւ «Մտկվարի» անցակետերով ֆիզիկական անձանց (ինչպես Վրաստանի քաղաքացիների, այնպես էլ՝ արտասահմանցիների համար) եւ մարդատար ավտոմեքենաների համար փակ կլինի:

# ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (WCO ) ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (WTO) ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը մաքսային համաշխարհային կազմակերպության 183 անդամ երկրների մաքսային վարչակազմերի հետ միասին, լրիվությամբ համամիտ է եւ միանում է ընթացիկ տարվա ապրիլի 6-ին մաքսային համաշխարհային կազմակերպության ու առեւտրի համաշխարհային կազմակերպության կողմից տարածած համատեղ հայտարարությանը:***

Նշյալ հայտարարության մեջ կողմերը պատրաստակամություն են հայտնել համատեղ գործել, որպեսզի առավելագույնս դյուրացնեն առեւտուրն այնպիսի ապրանքաշրջանառության համար, ինչպիսիք են բժշկական գույքը, պարենամթերքը եւ էներգետիկան:

Մաքսային համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի եւ առեւտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն Ռոբերտո Ազեւեդոյի խոսքով, երկու կազմակերպությունները սերտ կհամագործակցեն, որպեսզի նվազեցվեն ապրանքային սահմանային վերահսկողության եւ գլոբալ առեւտրի արգելափակումները: Միաժամանակ, վերոնշյալ կազմակերպությունները հասարակական առողջապահության պաշտպանության նպատակով, առանձնակի ակտիվությամբ կներգրավվեն COVID-19-ի դեմ պայքարի գործընթաց:

«Նման պայմաններում, երբ COVID-19-ը գլոբալ տարածում է գտել, կառավարությունները նորանոր միջոցներ են ձեռնարկում քաղաքացիների առողջապահության եւ բարեկեցության պահպանման համար, մենք մեր մանդատի շրջանակներում, անդամ երկրներին կոչ ենք անում ապահովել սահմանային վերահսկողության նոր միջոցառումներ, որոնք կլինեն նպատակամղված համապատասխան, թափանցիկ եւ ոչ խտրական: Միաժամանակ, մենք պարտավոր ենք հավասար օգնություն ցուցաբերել բոլոր շահագրգռված կողմերին: Միաժամանակ ընդգծում ենք, որ վերոնշյալ միջոցները ժամանակավոր բնույթ ունեն եւ կվերացվեն այն ժամանակ, երբ վերանա անհրաժեշտությունը»,- ասված է մաքսային Համաշխարհային կազմակերպության եւ առեւտրի Համաշխարհային կազմակերպության համատեղ հայտարարության մեջ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

COVID - 19. ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ԲԵՍԻԿ ԱՄԻՐԱՆԱՇՎԻԼԻ. «ԲԱՐԵԲԱԽՏԱԲԱՐ, ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ՈՉ ՄԻ ԴԵՊՔ ՉԻ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ»

*Նոր կորոնավիրուսով պայմանավորված երկրի ողջ տարածքում հայտարարված արտակարգ դրության եւ պարետային ժամի պայմաններում, առանձնակի նշանակություն է ձեռք բերում տեղական իշխանությունների հստակ եւ նպատակային աշխատանքը: Այդ առումով, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանը, երկրի կենտրոնական կառավարության օրինակով, բավական կազմակերպված, մունիցիպալային ծառայությունների գործունեության հստակ կազմակերպմամբ, դիմավորեց գլոբալ մարտահիրավերը: Մեր թղթակից Յուրի Պողոսյանի հետ զրույցում, տարածաշրջանում կորոնավիրուսի տարածումը կանխելու, երկրամասի տնտեսական ներուժի պահպանման ուղղությամբ իրականացվող միջոցառումների մասին պատմեց երկրամասի պետական լիազոր նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին:*

***- Բատոնո Բեսիկ, նախ խոսենք Սամցխե-Ջավախեթիի երկրամասում կորոնավիրուսի տարածումը կանխելու ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին:***

- Բարեբախտաբար, երկրամասի վեց մունիցիպալիտետներից եւ ոչ մեկում կորոնավիրուսով վարակման դեպք չի արձանագրվել: Այսօրվա դրությամբ, Սամցխե-Ջավախեթիում գործում են կարանտինի յոթ տարածքներ, որոնցից հինգը Բակուրիանիի ավանում է, եւս մեկական բացված են Ախալցիխեում եւ Աբասթումանիում: Այդ տարածքներում, ապրիլի 10-ի դրությամբ գտնվում է 457 մարդ, որոնց մոտ, կրկնում եմ, կորոնավիրուսը չի հաստատվել եւ կարանտինի ժամկետի՝ 14 օրվա սպառումից հետո, այդ մարդիկ կվերադառնան իրենց ընտանիքներ: Նաեւ ավելացնեմ, որ երկրում արտակարգ դրության հայտարարումից հետո, երկրամասի վեց մունիցիպալիտետներում ինքնամեկուսացման պայմանակարգ սահմանվեց մեկուկես հազարից ավելի մարդկանց նկատմամբ, իսկ այսօրվա դրությամբ նրանց թիվը նվազել է, հասել ընդամենը 20-ի: Ավելացնեմ, որ առանձին մունիցիպալիտետներում, մասնավորապես՝ Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում ինքնամեկուսացման պայմանակարգ հաստատվեց հիմնականում Հայաստանից հարազատ ընտանիքներ վերադարձած ուսանողների համար: Ինչպես տեսնում եք, իրավիճակն այնքան էլ տագնապալի չէ, թեպետ երկրամասի ողջ տարածքում շարունակում ենք խստորեն պահպանել «Մնա տանը» կարգախոսով ներկայացված պահանջները, վարչապետի ղեկավարած համակարգող խորհրդի, Վրաստանի առողջապահության նախարարության հանձնարարականները, արտակարգ դրության ու կարանտինի ժամի սահմանափակումները: Այդ ամենն իրականացվում է ինչպես ներքին գործերի նախարարության ստորաբաժանումների, այնպես էլ՝ մունիցիպալիտետներում տեղական իշխանության նախաձեռնությամբ ստեղծված կամավորական խմբերի ջանքերով:

***- Իսկ ի՞նչ կասեիք երկրամասի բժշկական հաստատությունների պատրաստվածության մասին:***

- Բառացիորեն օրերս, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, սելեկտորային կապով հանդիպում ունեցավ երկրամասերի նահանգապետերի, ինչպես նաեւ մունիցիպալիտետների ղեկավարների հետ: Վարչապետի խստագույն պահանջներից մեկը երկրամասերում գործող բուժհաստատությունների մարտական պատրաստվածության հարցն էր: Այդ նպատակով, երկրամասի բոլոր բուժհաստատություններում անցկացվեցին ստուգումներ, աշխատանք է տարվում բուժանձնակազմի նախապատրաստման ուղղությամբ: Բնականաբար, քայլեր ենք ձեռնարկել նաեւ իրավիճակի հնարավոր վատթարացման ուղղությամբ: Մասնավորապես, Ախալցիխեի բուժհաստատություններում պատրաստվածության վիճակում են գտնվում 14 հոգու համար նախատեսված բոքսացված պալատը (անհրաժեշտության դեպքում, այդ թիվը կհասցվի 50-ի), 4-ական նման պալատներ են բացված Ախալքալաքիում, Նինոծմինդայում եւ Բորժոմիում: Աստված մի արասցե, անհրաժեշտության դեպքում, տեղերը կավելացվեն: Նաեւ քայլեր ենք ձեռնարկել շտապ բժշկական օգնության՝ 112-ի եւ գյուղական բժիշկների միջեւ համագործակցության խորացման ուղղությամբ: Փաստորեն, 112-ը անմիջապես արձագանքում է գյուղերից ստացվող զանգերին:

***- Իրոք, երկրամասային եւ մունիցիպալային վարչությունների օպերատիվ աշխատանքը Ձեր երկրամասում դրական արդյունքների հանգեցրեց: Ինչպե՞ս կարողացաք հասնել դրան:***

- Նախ, դեռեւս մինչեւ երկրում արտակարգ դրության հայտարարումը, երբ նոր-նոր էին ուրվագծվում հնարավոր աղետի չափերը, մունիցիպալիտետների քաղաքապետերի եւ սակրեբուլոյի ղեկավարների հետ քայլեր ձեռնարկեցինք բնակչության նախապատրաստման ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն հատկացրինք երկրամասի հայաբնակ բնակավայրերի բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանը: Դրանում մեծ օգնություն ցուցաբերեց ձեր «Վրաստան» թերթը: Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի ջանքերով, տեղաշարժերի ներկայիս սահմանափակումների պայմաններում երկրամասի հայ բնակչությանն է հասցվում, իրոք, արտակարգ դժվար պայմաններում լույս տեսնող «Վրաստան» թերթը, որտեղ մանրամասն տեղեկատվություն է հրապարակվում կորոնավիրուսի վտանգի, դրանից պաշտպանվելու, ինչպես նաեւ երկրում արտակարգ դրությամբ ու պարետային ժամով սահմանված սահմանափակումների մասին, թե ինչ քայլեր է անում պետությունը, որ օգնի երկրի բնակչությանը: Կրկին խորին շնորհակալություն եմ հայտնում «Վրաստանի» խմբագրությանը՝ ստեղծված իրավիճակին նման օպերատիվ արձագանքման համար: Բնականաբար, մեծ դեր ունի նաեւ վրացերեն եւ հայերեն տպագրված բուկլետները, տեղեկատվական գրքե 100 հազար ֆլայերները անմիջապես գյուղեր հասցնելու ուղղությամբ երկրամասային եւ մունիցիպալային վարչությունների



աշխատանքը, ինչպես նաեւ այդ հարցերով զբաղվող Ախալցիխեի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանի ջանքերը, որոնց շնորհիվ, ոչ միայն Ախալցիխեի, այլ նաեւ հարեւան Բորժոմիի Տաբածղուրի եւ Մոլիթ գյուղերի բնակիչները ժամանակին տեղեկացվեցին կորոնավիրուսի սպառնալիքի մասին:

***- Նոր կորոնավիրուսը մեծ հարված հասցրեց երկրի էկոնոմիկային, մասնավորապես՝ զբոսաշրջության ոլորտին…***

- Ինչպես հավանաբար գիտեք, Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ փոքր եւ միջին գործարարության ու ընդհանրապես երկրի էկոնոմիկայի հնարավոր կորուստների մասնակի փոխհատուցման նպատակով, հատկացնում է երկու միլիարդ լարի: Ներկա դրությամբ, երկրամասային վարչության հանձնարարականով մունիցիպալիտետներում աշխատանք է տարվում իրենց տարածքում գործող նման հաստատությունների ներուժի եւ, ամենակարեւորը. աշխատատեղերի պահպանման համար անհրաժեշտ միջոցների հստակեցման ուղղությամբ: Կարծում եմ, որ կենտրոնական իշխանության հետ համատեղ, մեզ կհաջողվի նվազագույնի հասցնել տնտեսական կորուստները, պահպանել աշխատատեղերը, որպեսզի մարդիկ չզրկվեն եկամտի աղբյուրից: Բնականաբար, քայլեր են ձեռնարկվում նաեւ սոցիալական օգնության ուղղությամբ: Կամավորական հատուկ խմբերը, երկրամասի բոլոր մունիցիպալիտետներում աշխատում են միայնակ կենսաթոշակառուներին, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց եւ սոցիալապես կարիքավորներին օգնելու ուղղությամբ:

Ավելացնեմ, որ անձամբ ես եւ ինչպես երկրամասային վարչության, այնպես էլ՝ մունիցիպալիտետների աշխատակազմի անդամները, միացանք «Վրացական երազանքի» խորհրդարանական խմբի նախաձեռնությանը եւ որոշեցինք մեր աշխատավարձի որոշակի մասը փոխանցել կորոնավիրուսի դեմ պայքարի հիմնադրամ: Այդ հարցով մենք հանդիպում ունեցանք նաեւ երկրամասի տարածքում գործող բիզնեսմեններին, նրանց կոչ արեցինք հնարավորինս աջակցություն ցուցաբերել կորոնավիրուսի հետեւանքների վերացման գործում:

# ԵՐԿՈՒ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻՆ ԵՎ ՄԵԿ ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԸ ՀԱՎԱՆԱԲԱՐ ԿԲԱՎԱՐԱՐԵՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՎԱԾԻ ՄԱՍՆԱԿԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը մշակել է նոր կորոնավիրուսով պայմանավորված համավարակային ճգնաժամի պայմաններում երկրի էկոնոմիկայի եւ մասնավոր հատվածի աջակցության ծրագիրը: Այն նախատեսում է լրացուցիչ երկու միլիարդ լարի հետճգնաժամային ժամանակահատվածում գործարարներին դրամաշնորհի տեսքով վարկային միջոցներ ապահովելու, սոցիալական օգնություն քաղաքացիների համար: Կառավարությունը ծրագրում է նաեւ ֆինանսական փոխհատուցում տրամադրել աշխատանքը կորցրած քաղաքացիներին, թեպետ մինչ օրս չի մշակվել գործազրկության նպաստի չափի եւ սուբյեկտների սահմանման մեխանիզմը: Վրաստանի կառավարության հակաճգնաժամային ծրագրերի մասին «Վրաստան» թերթի թղթակցին պատմեց Վրաստանի Կենտրոնական բանկի նախկին փոխնախագահ, պրոֆեսոր Մերաբ Կակուլիան:*

***- Բատոնո Մերաբ, որքանո՞վ է իրատեսական կառավարության ճգնաժամային ծրագրով նախատեսված 2 միլիարդ լարիի օգտագործումը մասնակիորեն գործարարության աջակցությամբ եւ բնակչության սոցիալական օգնության ցուցաբերման համար:***

- 2 միլիարդ լարին կազմում է ներքին ապրանքի շուրջ 4 տոկոսը եւ, բնականաբար, այդ գումարը չի կարողանա լրիվ բավարարել ճգնաժամի արդյունքում հասցրած վնասի լրիվ փոխհատուցումը: Թեեւ ակնհայտ է, որ կառավարությունը, ելնելով ստեղծված իրավիճակից, հստակ գիտակցում է, որ այդ գումարը բավարար է համավարակային ճգնաժամի առաջին հարվածի թեկուզ մասնակի չեզոքացման համար: Ավելացնեմ նաեւ, որ խոստացած միջազգային ֆինանսական աջակցության պայմաններում, որը նախնական տվյալներով կազմելու է 600 միլիոնից մինչեւ 1 միլիարդ ԱՄՆ դոլարի գումար, կառավարությանը հնարավորություն կտա ավելի պատկառելի գումարներ ներդնել ճգնաժամի հետեւանքների վերացման ուղղությամբ:

***- Կառավարության կողմից բազմիցս հայտարարվել է, որ գլխավոր հոգսը աշխատատեղերի պահպանումն է, աշխատանքը կորցրած մարդկանց ֆինանսական աջակցության ցուցաբերումը: Ձեր կարծիքով, իշխանությունն ինչպե՞ս կարող է օգնել առանց եկամուտի մնացած ընտանիքներին:***

- Չնայած կառավարության գործադրած ջանքերի, ներկայիս արտակարգ իրավիճակի պայմաններում աշխատատեղերի մեծ մասը, ցավոք կփակվի, քանի որ շատ ոլորտներ, ինչպես նաեւ արտադրական շատ ձեռնարկություններ գործնականում չեն աշխատում եւ եկամուտ չեն ստանում: Ներկա դրությամբ, առաջնային պլան է մղվում աշխատատեղերի փակման վտանգի առջեւ կանգնած ներտնտեսական ֆինանսական օգնության ցուցաբերումը: Կառավարությունն արդեն սկսել է այդ հաստատությունների ցուցակի կազմավորումը, որը եւ կդրվի ֆինանսական օգնության ցուցաբերման հիմքում: Թեպետ դա եւս բավարար համարել չի կարելի, քանի որ երկրում աշխատուժի մեծ մասը գործում է ինքնագործարկման մեթոդով: Ընդդիմության առաջարկությունը, ըստ որի, գործազուրկ տղամարդկանց վճարվի հազարական լարի նպաստ, անիրատեսական է, քանի որ երկրի բյուջեն ի վիճակի չի լինի այն ապահովել:

***- Արդեն այսօր վարչապետ Գիորգի Գախարիան խոսում է հետճգնաժամային ծրագրերի մշակման մասին: Մասնավորապես, խոսքը վերաբերում է դրամաշնորհային-վարկային սխեմաների մշակմանը, որի շնորհիվ, գումարներ կհատկացվեն գործարարության ակտիվացման համար: Ի՞նչ կասեիք այդ մասին:***

- Դրամաշնորհային-վարկային սխեմաների մշակումը, բնականաբար, նշանակալից է փոքր եւ միջին գործարարության համար, այսինքն, բանկային միջոցներից օգտվելու որոշակի սահմանափակություն ունեցող գործարար շրջանների համար: Ներկայացվող ծրագրերի շնորհիվ փոքր եւ միջին գործարարությունների նշանակալի մասը կկարողանա վերականգնել իր գործունեությունը: Ամենայն հավանականությամբ, կրկին կգործարկվի «Արտադրի'ր Վրաստանում» ծրագիրը: Տվյալ պարագայում, ամենայն հավանականությամբ, կվերանայվի դրամաշնորհներ եւ վարկեր հատկացնելու կարգը, այն հաշվով, որպեսզի դրանից օգտվող ընկերությունների թիվը զգալիորեն մեծանա:

***- Վերջին ժամանակներում, ազգային տարադրամի կուրսի կտրուկ անկմանը փոխարինեց ԱՄՆ դոլարի նկատմամբ մեր լարիի որոշակի կայունացումը:***

- Իրոք, կարճ ժամանակահատվածում լարիի կտրուկ անկումից հետո, նկատվում է կայունացում: Բնականաբար, դրանում նշանակալից է Ազգային բանկի ցուցաբերած ակտիվությունը: Դա արտահայտվեց նրանով, որ Ազգային բանկը, շրջանցելով տարադրամային շուկան, անմիջականորեն պայմանավորվածության հասավ կոմերցիոն բանկերի հետ՝ դրանց առաջարկելով պահանջարկ վայելող ԱՄՆ դոլարով վերջիններիս ապահովումը: Ինչպես տեսնում եք, այն դրական ազդեցություն գործեց, ինչն անդրադարձավ լարիի կուրսի վրա:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*